Երեք առաքինութեամբ մարդս միշտ իմաստնոյ անուն կ'ունենայ . քիչ խօսելով, շատ լսելով, և տգէտին դիմաց լռելով :

Երեք ազնիւ բան ունի մարդս . կեանք, հոգի, և պատիւ :

Երեք բան պէտք է խնդրէ մարդ . ճշմարիտը, գեղեցիկը և բարին :

Ճշմարիտ հայրենասէր ըլլալու համար՝ երեք բանի ետեւէ պիտի ըլլայ մարդ . փոյթ ունենալ տղայոց կրթութեան, առաքինութեան բարգաւաճելուն, և արուեստներն ու դպրութիւնները ծաղկեցընելուն :

Երեք բան կայ որ փող մ' ալ չեն արժեր . աղքատի մը խորհուրդը, բեռնակրի չափ ուժ ունենալը և լիրբ կնկան գեղեցկութիւնը :

Ծնողաց համար երեք հարկաւոր խրատ . փայփայէ որդիդ, որպէսզի ցաւիս վերջը . կատակ ըրէ անոր հետ, որ ետքը զղջաս . պատժէ՝ որ զքեզ գոհ ընէ :

Պիւթագորաս կը պատուիրէ ո՛ր և իցէ քաղքէ երեք ախտ վռնտել . զդատարկութիւն, զանկարգութիւն և զանմիաբանութիւն :

Պուալօ երեք խրատ կու տայ մարդուս . պարզ եղիր առանց արուեստականութեան, վսեմ առանց ամբարտաւանութեան, հաճոյական ու սիրելի առանց կեղծելու :

Մեծն Կիպրիանոս երեք բան կ'ուզէ որ մարդուս վրայ գտնուի . սրտին մէջ՝ Աստուած, բերանն՝ ճշմարտութիւն, ձեռաց մէջ՝ ողորմութիւն :

Կանանց երեք ահաւոր զէնքերն . արտասուք, լեզու, և չարութիւն :

Կանայք երեք տեսակ արտասուք ունին . ցաւի, ուրախութեան և չարութեան :

Երեք գործք ճշմարիտ բարեկամութեան . բարիքն ուզել, բարիք ընել, և միաբանութիւն :

Ծառայ մը երեք բան պէտք է ունենայ . հաց, աշխատութիւն և հաւատարմութիւն :

Մարդուս գլխաւոր երեք պարտքերը . պարտք առ Աստուած, առ ընկերն և առ անձն :

Քաղաքացւոյ մը պարտքերը երեք են . յարգել զիշխանն, հնազանդել օրինաց, և օգնել թշուառաց :

Սենեկայի ըսածին նայելով երեք թունաւոր լեզու կայ . շողոքորթին, զրպարտողին և տրտնջողին :

Երեք բան կայ որ զմարդ մարդկութենէ կը հանէ . ագահութիւն, անգթութիւն և վրէժխնդրութիւն :

Տգէտ մարդը երեք աստիճան խենդութիւն ունի . ինքզինքը գիտունի տեղ դնել, գիտութիւն գործածել, և բուն գիտունը արհամարհել :

Երեք ախորժելի բան կայ . հարկաւորը, հաճոյականը և պարկեշտը :

Երեք օգուտ ունի արեգակը . լոյս, տաքութիւն և աճելութիւն :

Ամուսնութիւնն երեք բարիք ունի . հաւատարմութիւն, միաբանութիւն և սերունդ :

---

# Բանաստեղծութիւն

## ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

### Մանուշակ :

Ո՛վ գեղեցիկ գարնան դըստրիկ
Երկչոտ սիրող անտառաց,
Զոգիս դըրդէ քո հոտ քաղցրիկ.
Դու տաս տեղի յարգանաց :

Իբր ըղձածուն ոք բարերար
Որ ձեռն օգնէ աղքատին,
Զշնորհսդ ընծայես հաճոյարար
Ուր գովեստից գնաս մեկին :

Դու անպաճոյճ, յաչաց հեռի,
Կեաս առանձին եւ անշուք,
Եւ աչք ի խոյզ ծաղկիդ լինի,
Զնա գուշակեն մինչ ռընգունք :

'Դ անգութ ոտիցս անցաւորաց
Յար ի կորուստ գնաս հեշտին.
Ընդ հարուածովք այսպէս չարաց
Է զի անմեղք մեռանին :

ՏԻԿՊՈՅ